վարութեան ծրագիրը եւ երեքգծանի (մոսին) հրացանի արժէքը բարձրացնում է մինչեւ ութ հազար ռուբլու: Ահա այս ձեւով, կարողանում է մեծ քանակութեամբ զէնքեր գնել ու զինաթափել հայ գիւղացիներին:

Այդ օրերին ութ հազար ռուբլին քիչ փող չէր, կարելի էր 10–15 փութ ցորեն գնել: Քաղցած եւ ընտանիքով ծանրաբեռնուած գիւղացին երկար չէր մտածում, որ իր զէնքը ծախում էր իր թշնամուն եւ առանց խորանալու որ այդ զէնքով մի օր թշնամին, իր դէմ պիտի դուրս գայ, ծախում էր զէնքը, սովից ազատելու համար իր ընտանիքը:

«Ապառաժ»ի Կ. Կոմիտէն լաւ ըմբռնելով Ադրբէյջանի կառավարութեան նպատակը, որոշում է դաւառում ուժեղ ինքնապաշտպանական մարմին ստեղծել: Նրա ձգտումն էր նախ զինավաճառների եւ լրտեսների վրայ ազդել եւ երկրորդ՝ շրջաններում գաղտնի մարմիններ առաջ բերել եւ հայ գիւղացիներին զինել:

Կ. Կոմիտէի կողմից ընտրւում է ինքնապաշտպանական մարմին երեք հոգուց բաղկացած — Ա. Շ., Ա. Ա. եւ Ֆ. Մ.:

Այդ Ինքն. Մարմինը Սեպտ.ի սկզբներից անցնում է գործի եւ բոլոր շրջանների կարեւոր գիւղերում առաջ է բերում գիւղական ինքնապաշտպանական մարմիններ, որոնց միջոցով կուում է զինավաճառման եւ լրտեսների դէմ, ու միաժամանակ գիւղական միջոցներով զինում է շրջանները:

Պէտք է ասել, որ Ինքնապաշտպանական Մարմինը, հակառակ իր նեղ միջոցներին, մեծ գործ է կատարում դաւառում:

Թէ՛ Ինքնապաշտպանական Մարմինը եւ թէ՛ Կ. Կոմիտէն, միանգամայն զուրկ էին նիւթական միջոցներից եւ հնարաւորութիւն չունէին որեւէ լուրջ գործի մասին մտածելու:

Ազգային Խորհուրդը, ահագին պարտքերի դիմաց Զիւանշիրում Մ–ի մօտ երեսուն հազար ռուբլի միայն ունէր:

Ինքն. Մարմինը այդ դրամը ստանում է Մ–ից եւ մի մասով Ազգային Խորհուրդի անհրաժեշտ պարտքերն է վճարում, իսկ միւս մասը սուրհանդակային գործին է յատկացնում եւ կապ է ստեղծում Զանգեզուրի կառավարութեան հետ:

7–րդ համագումարից մի ամիս չանցած, Ադրբէյջանի կառավարութիւնը, նոր–նոր պատրաստութիւններ է տեսնում, Զանգեզուրը գրաւելու համար:

Առաջին հերթին Շուշի–Ելիսաւ խճուղին փակելու համար, որպէսզի այլեւս հայեր չճամբորդեն, մի շարք կոտորածներ է առաջ բերում:

Սիմէօն Իւզբաշեանին իր բարեկամների հետ, երեք կառք ճամբորդների, Ղարաբաղումն են անհետացնում:

Երկու բեռան կառք լիքը հայերի — Բաղուից տուն վերադարձող գիւղացիներ — Աղդամում են կոտորում:

Դաշտային մասում աշխատող հայ գիւղացիներին, կենդանի–կենդանի հորերն են լցնում:

Եւ այս ձեւով փակում են Շուշի–Ելիսաւ խճուղին ու միաժամանակ էլ երկու ժողովուրդների յարաբերութիւնը նորից լարւում է:

Ադրբէյջանի կառավարութիւնը, բացի կոտորածներ առաջ բերելուց ու խճուղիները փակելուց, Սեպտեմբերի վերջերին խախտում է եօթերորդ համագումարի համաձայնագիրը եւ մի ամբողջ բրիգադա զօրք է շարժում դէպի Ղարաբաղ, բռնելով Ասկերանի, Շուշու, Խանքենդի, եւ այլ կարեւոր շրջանների ռազմական կէտերը, իսկ Ֆ. Սուլթանովը, իր աւազակային խմբերով, ահ ու սարսափի մէջ է պահում սահմանամերձ հայ գիւղերը եւ այսպիսով միանգամայն փակում բոլոր ճանապարհները:

Հոկտեմբերի կէսերին Հ. Յ. Դ. «Ապառաժ»ի Կ. Կոմիտէն ստոյգ տեղեկութիւններ է ստանում, որ Ադրբէյջանի կառավարութիւնը, ծրագրել է Զանգեզուրը գրաւել եւ այդ նպատակով էլ զօրքեր է կենդրոնացնում Ղարաբաղում:

Կ. Կոմիտէին յաջողուել էր Ադրբէյջանի կառավարութեան՝ Սուլթանովին ուղարկած ծածկագիր հեռագիրները բանալ եւ մանրամասնութիւնները իմանալ:

Հոկտեմբեր 28–ին Ադրբէյջանի կառավարութիւնը հրահանգում է Ղարաբաղի հրամանատարին եւ Սուլթանովին, զօրքերը շարժել